այնպէս սիօգունը շարունակում է որոշ օրերին ներկայանալ միկադոյին, նրան երկրպագելու համար: Այսպիսով առաջանում է հոգեւոր եւ աշխարհական իշխանութեան բաժանումը, որ եւ տեւեց 12-րդ դարից սկսած մինչեւ Ճապոնի վերջին յեղաշրջումը 1868-ին:

Սիօգունը թէեւ ուժեղ էր իր զէնքի զօրութեամբ, բայց հաստատ չէր նրա դիրքը. մի ուրիշ զօրեղացած դայմիօսը խլում էր նրա ձեռքից իշխանութիւնը եւ բռնում էր նրա տեղը: Մինչդեռ միկադօն թէեւ արտաքուստ անզօր, բայց դարէ դար իր աստուածային իշխանութեան մի ինչ-որ առանձին հրապոյրի մէջն էր պահում երկիրը իր Կիոտոյի պալատի ոսկի բանտից:

Դայմիօսների իշխանութեանը ենթակայ էին սամուրայները, այսինքն ազնուականները. նրանցից յետոյ գալիս էին ազգաբնակչութեան մնացած մասերը՝ երկրագործները, արհեստաւորները եւ վաճառականները: Վաճառականը ամենաստորին աստիճանն էր կազմում Ճապոնի ազգաբնակութեան մէջ, մինչեւ անգամ երկրագործներից էլ ստոր: Դա խիստ բնորոշ է Ճապոնի նման մի իսկական ռազմիկ ազգի համար եւ միեւնոյն ժամանակ բացատրում է, թէ ինչու եւրոպացիք շարունակ գանգատւում են Ճապոն առեւտրականի անբարեխղճութեան վրա: Դարեւոր ստորացումը անշուշտ խորին դրոշմ պիտի դրած լինէր նրա բնաւորութեան վրա:

Հետաքրքրական է յիշել, որ նրանց ցեղակից ու դրացի չինացիք բոլորովին հակառակ են. վաճառականները միշտ համարւում են ամենաազդեցիկ դասակարգ. մինչդեռ զինւորականները մինչեւ այժմ ետին տեղն են բռնում: